րում լրագրին հայհոյանքներ, կռիւներ սովորելու և կարդալու համար. եթէ այդպէս է՝ ուրեմն փոխանակ 8 ր. «Մեղուին» տալու, աւելի քիչ գումարով կարող ենք գնալ ցիրկեր, գազանանոցներ, և ուրիշ ըմբշամարտութիւնների տեղեր, այնտեղ մենք աւելի մեծերին և լաւերին կարող ենք հանդիպել. բայց մենք, արդար քրտինքով վաստակած փող ենք վճարում ոչ թէ յիմարութիւններ կարդալու, այլ ազգային կեանքի վրա լաւ լաւ յօդուածներ, լսել այս ճգնաժամիս մեր հեռաւոր ու արիւնակից ազգայինների կեանքը, ուրախանալ՝ երբ որ նրանք լաւ վիճակի մէջ են, և տրտմել ու օգնել, երբ որ նրանք նեղութեան մէջ են և օգնութեան կարօտ։

Կարծեմ հասկացաք, պ. Գալֆայեանց, փոխանակ մեզի համար գեղին տուն խնդրելու՝ խնդրեցէք նրանց համար, որոնք ազգի թշնամի, խաւարասէր և ազգային օգտաւէտ գաղափարների խանգարիչ են, որովհետև նրանցից ազատուել չէ կարելի մինչև չը գայ՝ Գաբրիէլ Իվանիչը։—(ըստ ձեր)

Մի երկու խօսք էլ Քաղքցուն և Սարգիս Գընունունուն։

Յայտնի է, որ ֆէլիետօնիստին տուած է ազատութիւն իր գրուածների մէջ, բայց չէ՞ որ, մարդկութեան մէջ կայ ամեն բանի հետ և ազնուութիւն. դուք, պ. Քաղքցի, ազնուութեան նշոյլ անգամ չունէք ձեր մէջ, որովհետև եթէ ունենայիք՝ փոխանակ վայր ի վերոյ հաչելուց, ազնուաբար կը հերքէիք մեր ասածները։ Ես աւելի ձեզ բան չունիմ ասելու, որովհետև իմաստունի խօսքին լսելով թէ, «անամօթից կամ փախիր և կամ լռիր»՝ ես էլ լռում եմ ձեզ վրա խօսելուց, իսկ ինչ կը վերաբերի «Մեղուի» խմբագրին, որ ձեզպէսների համար բացել է իր թերթը, խօսելը աւելորդ է, որովհետև ամեն մարդ գիտէ «Մեղուի» ընթացքը և յամառ բնաւորութիւնը. բաւական չէր, որ ամբողջ թերթը լցնում էր ամօթալի յօդուածներով, այժմ ֆէլիետօնով է կամենում իր ամօթը ծածկել։ Պ. Գընունին մեղադրում է «Մշակին», որ «Մշակը» իր թերթի մէջ տեղ է շնորհել Ամիրխանեանցին և Մելիքզադէին, յանդգնում է մեղադրելու, որ «Մշակը» խաբել է Մելիքզադէի 200 տարուց յետոյ բոլոր հայերին բողոքականացած երազով՝ այժմէն սկսել է պաշտպան կանգնել բողոքականաց։ Պ. Գնունի, ինչ էք կարծում ձեզ, ինչ էիք մի քանի տարի առաջ, և ինչ էք այժմ... մարդս լինելով միշտ փոփոխական, կարող է և ամեն բան նորանում կատարվել, 200 տարի, լաւ մտածեցէք... ուրեմն մենք մարգարէների գրուածքներին չը հաւատանք, ուրեմն սուտ է, ,,գայլք և գառինք ի միասին ճարակեսցին'' խօսքերը, մի և նոյն ժամանակ խելքերուդ մէջ տեղաւորեցէք, որ ամեն մարդ ունի իր ազատ գաղափարը, իր մտքի ծնունդները, ինչ կամենայ՝ այն կարող է խօսել և գրել. Մելիքզադէն ռոմանիստ է, բանաստեղծ է, նա ազատ է ամեն բան ստեղծելու և գրելու, իսկ կրիտիկոսի պարտաւորութիւնն է հերքել, եթէ կան նորա մէջի եղած անճշտութիւնները. արէք մի այդպիսի բան, և ամենքս շնորհակալ կը լինենք ձեզնից, բայց առանց փաստի ամբողջ երեք չորս թերթ լցնել սուտ ու պատիր գրուածք՝ դա տմարդութիւն է. եթէ ֆէլիետօնիստին տուած է ամեն յիմարութիւններ դուրս ցնդելու, ինչու, ուրեմն չէ տուած մի և նոյն ժամանակ բանաստեղծին գրելու իր մտքից ծնուած գաղափարները, որոնց համակրեցին բոլոր հայերը, դուք էլ, պ. Գնունի, և ոչ միայն հայերը՝ այլ և օտար ազգերը։ «Խենթը'' վէպը, այսօր իրանց մայրենի լեզուով թարգմանած լինելով՝ մեծ համակրութեամբ կարդում են. այս ձեզ յայտնի է, թէ ոչ։—

Ո՞վ ուրանում է մեզնից, որ մինչև այժմ լուսաւորչական եկեղեցիով էին պարծենում բոլոր հայերը, ո՞վ է ուրանում, որ մեր սուրբ նախահայրերը Հայաստանեայց եկեղեցու սուրբ խաչը ձեռքներում բռնած գնում էին պատերազմ, ազգութիւն և կրօն պաշտպանելու համար. մենք ուրացած չենք և ուրանալու էլ միտք չունենք, բայց այն դարերը անցել են. այժմեան լուսաւոր դարում, երբոր հայկական խնդիրը 500 տարի քնելուց յետոյ զարթել է՝ և երբոր Եւրոպայի լուսաւոր տէրութիւնք կամենում են պաշտպանել մեր դատը՝ մենք փոխանակ մեր այլադաւան եղբայրներին սիրելու և մեզ միացնելու, հալածում ենք, մեզի հետ եղբայր և ազգութիւն չենք կամենում ճանաչել։ Եթէ մենք մի քանի տարի առաջ սկսած լինէինք նոցա սէր ցոյց տալ, նոցա հետ միանալ—կամ միացնել, այսօր, մի դաւաճան Տառեան, կամ մի տաճիկ կառավարութիւն կը յանդգնէր հայերիս 17% հաշուելու. խոստովանեցէք, «Մեղուի» արբանեակներ, որ այս ճշմարտութիւն է, և դուք յամառում էք, չէք կամենում լիզել ձեր թքածը. տեսէք ընթերցող, հայերիս եսամոլութիւնը, մինչև ո՞ւր աստիճան ծայրահեղութեան է հասել։—

Թող վերջանան այս վէճերը, բաւական է որքան զզուեցան ընթերցողները, նոր տարի է գալիս, ինչ հաշիւ և համար պիտի տայ «Մեղուն» գալոց տարում այս տարւայ համար. փոխանակ լուսաւորութեան շաւղի մէջ քայլերը յառաջացնելու փոյթ կալնելու՝ ազգի գործերով զբաղելու, խեցգետնի պէս յետ մնաց, յամառեց կրօնական մոլեռանդութեան մէջ, դարձաւ «խաւարասէրների» օրգան, և դեռ ով գիտէ, թէ մինչև երբ պիտի յամառած մնայ։—

Հայ-լուսաւորչական

## ԽԱՌԸ ԼՈՒՐԵՐ

Այժմ Փարիզում յաճախ են լինում բանուոր կանանց ժողովներ։ Կանանց մէջ խօսողներից գլխաւորներն են Լուիզ Միշել և Մինկ։ Առաջինը աքսորված էր Կալեդոնիա կոմունայի գործերին մասնակցելու պատճառով։ Տիկին Միշել պահանջում է կանանց համար հաւասար իրաւունքներ մարդկանց հետ։ «Հրաժարվեցէք ամուսնութիւնից և ընտանիքից, ասում է նա կանանց, և տղամարդիկ ձեզնից կախված լինելով, ստիպված կը լինեն տալ ձեզ բոլոր հասարակական և քաղաքական իրաւունքները»։

⁂

Այս օրերս վախճանվեցաւ Փարիզում տիկին Թիէր։ Նա վաթսուն և երկու տարեկան էր և իր մարդու մահից յետոյ միայն երեք տարի ապրեց։

⁂

Մեզ պատմում են մի իրողութիւն, որ լաւ հասկացողութիւն է տալիս մեր հայ-կաթօլիկ կղերի մոլեռանդութեան մասին։ Մի հայ կաթօլիկ մանկաբարձ կին Արտուինի մէջ կանչված է լինում մի ծննդկան հայ-լուսաւորչական կնոջ մօտ։ Մանկաբարձ կինը ընդունում է հրաւէրը և հարկաւոր օգնութիւն է տալիս ծննդկանին։ Միւս օրը հայ-կաթօլիկ հոգևորականութիւնը հրաժարեցնում է խեղճ մանկաբարձ կնոջը կաթօլիկ եկեղեցու գրկից, ասելով որ օգնութիւն տալով լուսաւորչական հայ ծննդկան կանանց նա նպաստում է աշխարհիս երեսի վրա հերետիկոսների բազմացնելուն։

⁂

**ԱԽԱԼՑԽԱՑԻՑ** մեզ գրում են, որ այդ քաղաքի երկու նշանաւոր անձինք, իրանց բան ու գործը թողած, ամբողջ օր ման են գալիս՝ տնից տուն և խանութից խանութ և յորդորում են բնակիչներին չը գրվել «Մշակին», այլ գրվել «Մեղուին»։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 15 դեկտեմբերի։ Ալէքօ-փաշա հրաժարականի մասին խնդիրք տուեց։ Ֆինանսական յանձնաժողովը մերժեց Պատրդօրֆի ծրագիրը։

ՕԴԷՍՍԱ, 14 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 13-ին երեկոյեան Օդէսսայում, Տիրասպոլում, Կիշինեվի մէջ և ամբողջ Բէսարաբիայում զգալի եղաւ երկրաշարժի սաստիկ հարուած, որ տևեց մի վայրկեան։ Վերի յարկերում կահկարասիները տեղից շարժվեցան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Շուտով հրատարակվելու է տէրութեան կարգադրութիւնը, որի զօրութեամբ, ինչպէս հաղորդում է ,,Голосъ'' լրագիրը, կը սահմանվի պետական բանկին պարտքի յաջորդաբար հանգցնելու միջոցը։ Հանգումն կը կատարվի ութ տարւայ ընթացքում, սկսած 1 յունվարից 1881 թւի, յիսուն միլիօն րուբլ տարեկան հատուցմամբ։ ,,Голосъ'' հաղորդում է որ գիլդիական և մաքսական տուրքերի բարձրացնելը կը ծածկի այն պակասը, որ կարող է գոյանալ աղի վրա ակցիզի վերցնելուց։ Արտասահմանեան աղից վերցվող մաքսի պակասեցնելը դարձեալ երկու միլիօն րուբլու տարեկան աւելուած կը տայ պետական գանձարանին։

ՆԻԺՆԻ - ՆՈՎԳՕՐՕԴ, 15 դեկտեմբերի։ Այստեղ տեղի ունեցաւ ջրանցքի հանդիսաւոր բացումը։

ԼՕՆԴՕՆ, 15 դեկտեմբերի։ Ասում են որ Անգլիան դիտաւորութիւն ունի առաջարկել մի նոր կօնֆէրէնցիա Թիւրքիայի և Յունաստանի պատգամաւորների մասնակցութեամբ, եթէ Թիւրքիան մերժի միջնորդ դատարանի ծրագիրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 93 ր. Ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը 225 ր. 50 կ., երկրորդ 219 ր., արևելեան առաջին 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 62կ., ոսկի 8 ր. 6 կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 րուբլ Համբուրգի վրա 209 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 259 ֆրանկ, 25 սանտիմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ ,,Herold'' լրագրի հաղորդութիւնը, իբր թէ Լօզօվօ-Սեվաստօպօլսկայա երկաթուղու Սլավգօրօդսկայա կայարանի մօտ ռելսների տակ փորված է եղել, սխալ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

—Սուտ է խօսում, աղայ, ես նրան երբէք չեմ ծեծել. Թող Աստուած իմ ձեռքը չորացնէ, եթէ միանգամ գոնէ նրան ծեծած լինիմ։

—Չես ծեծել, հէնց այսօր ծեծեցիր։ Հիմայ ցոյց կը տամ... ասաց կինը սպառնալից դէմքով, և բոլորովին մոռանալով իրան, մօտեցաւ իշխանին։ Նա գլուխը թեքեց, ցոյց տուեց իր գեղեցիկ երեսը, որի վրա երևում էին մի քանի կապոյտ նշաններ։ Յետոյ նա շտապով բաց արեց շալիքի օձիքը, մերկացրեց իր թիկունքը, այնտեղ ևս կային մի քանի կապոյտ նշաններ։ Իշխանը բոլորովին հիացաւ, տեսնելով այդ հարուստ, սքանչելի մարմինը կեղտոտ ցնցոտիների մէջ։

Բայց Հարունի բարկութեանը չափ չը կար. նրա սև բիբերը բոլորովին թաղնվեցան աչքերի կոպերի տակ։ Նա իր մտքում ասում էր. «հիմայ խօ կը գնայ այդ մարդը, ես այն ժամանակ քո կապուտակների թիւը կրկին կաւելացնեմ»...

Եսթերը, կարծես, գուշակեց նրա միտքը և կնիկների սովորական թուլութեամբ, տեսնելով իր առջև մի զօրաւոր ուժ, աշխատեց նրա մէջ պաշտպանութիւն գտնել ամուսնի բռնութեան դէմ։

—Դու դրա վիզը կը կտրես, երբ միւսանգամ կը ծեծէ ինձ, այնպէս չէ՞, հարցրեց նա իր գեղեցիկ, անբախտութեամբ լի աչքերը դարձնելով դէպի իշխանը։

Իշխանին խիստ անախորժ էր դատաւոր լինել մի այսպիսի ընտանեկան կռւի, բայց մանկահասակ կնոջ վրդովմունքը, նրա թշուառութիւնը և ծերունի ամուսնի անգթութիւնը այն աստիճան ազդեցին նրա վրա, որ պատասխանեց.

—Կը կտրեմ...

Ծերունի հրէան սարսափեց։

—Եսթեր, ի սէր Աստուծոյ, գոչեց նա ողբալի ձայնով,—ես աղբ կուտեմ, գլուխս քարին կը տամ, ես քեզ էլ չեմ ծեծի, ինչ որ ուզես կանեմ, միշտ խեղ, մեղր, փլաւ կուտացնեմ...

Եսթերը այս խօսքերից ուրախացաւ և մի գրաւիչ ժպիտով, որի մէջ արտայայտվում էր և՛ անմեղութիւն և՛ շնորհակալութիւն, մօտեցաւ իշխանին, և բռնելով նրա աջը, սեղմեց իր վարդագոյն շրթունքի վրա։ Կնոջ վարմունքը ամենևին օտարոտի չը թւեցաւ նրա ամուսնին, որովհետև այս կողմերում սովորութիւն էր կնիկներին ի նշան յարգանքի համբուրել տղամարդկերի ձեռքը։

Հարունը ճշմարիտ էր ասում, որ ինքը ակամայ ամուսնացաւ։ Փողի սէրը բոլորովին կուլ էր տուել նրա սիրտը. կնոջ համար ոչինչ չէր մնացել։ Վաթսուն և հինգ տարեկան հասակում նա ամուսնացաւ տասն և վեց տարեկան Եսթերի հետ։ Կինը այժմ քսան և մէկ տարեկան էր, իսկ ինքը բոլորովին ծերացած։ Խանդոտ ծերունին պահում էր Եսթերին իր այրի քրոջ պահպանութեան ներքոյ, որը սատանայի նման հսկում էր նրա վրա։ Այս գիշեր մի դիպուածով նա տանը չէր, գնացել էր իր աղջկայ մօտ։ Եթէ տանը լինէր, Եսթերը նրա մասին էլ շատ գանգատներ կանէր իշխանին։ Այդ պառաւը նրա հոգին առնում էր, չէր թողնում ջահել աղջկերքի հետ խօսել, չէր թողնում մենակ տնից դուրս գնալ... Եսթերը շատ անբախտ էր. Եսթերը մի լաւ օր չէր տեսնում... Յուդիթների այդ գեղեցիկ, մանկահասակ քոյրիկը այրվում, տանջվում, խորովվում էր երկու պառաւների ճանկերի մէջ... և նրա սրտի բոլոր տանջանքները կարելի էր նկատել նրա վշտացած, դունաթափ դէմքի վրա։

Գիշերից բաւական անցել էր։ Այժմ Հարունին անհանգստացնում էր ոչ թէ կնոջ անզգամութիւնը, այլ գլխաւորապէս այն միտքը, թէ ինչ պէտք էր անել անտանելի հիւրի հետ։ Պահել նրան իր տանը չէր կարող, իսկ այն ուշ, գիշերային պահուն դուները բաց անել նրա առջև, այդ ոչ միայն անկարելի էր, այլ իր երկրի հիւրասիրական սովորութիւններին բոլորովին հակառակ։ Բայց ինչով հիւրասիրել նրան։ Չը նայելով որ այն օր ուրբաթ էր, չը նայելով որ ուրբաթ օրը ամեն մի հրէայի տնում նախապէս պատրաստվում են շաբաթվայ բոլոր կերակուրները, իսկ իր տնում ոչինչ պատրաստութիւն չը կար։ Ուրեմն, պահելով հիւրին իր տանը, նա պիտի արդարացնէր Եսթերի գանգատը, թէ հրէաների մէջ ամենահարուստ ամուսինը իր կնոջը քաղցած էր պահում։ Այս պատճառով Հարունը շատ ուրախ եղաւ, երբ իշխանը հրամայեց նրան յայտնել ծառաներին, որ ձիանքը պատրաստեն։

—Միթէ իմ տունը արժան չէ ձեզ մի գիշեր անցկացնելու համար, ասաց նա կեղծ քաղաքավարութեամբ։—Այժմ ո՞ւր կարող էք գնալ, շատ ուշ է։

—Չեմ կարող մնալ, պատասխանեց իշխանը։

—Մնացէք, խնդրում եմ... աղաչում էր Եսթերը այնպիսի մի ձայնով, որ կարող էր ազդել ամեն մի երիտասարդ սրտի վրա։

Հարունը թեքվեցաւ և այնպէս պարզ փսփսաց կնոջ ականջին, որ բոլորը լսեց իշխանը.

—Դու չես հասկանում, յիմար, որ հրէայի տունը, հրէայի հացը պիղծ է քրիստոնեայի համար։

—Ես նրա համար մաքուր անկողին կը պատրաստեմ, ասաց կինը լսելի ձայնով, ուշադրութիւն չը դարձնելով, որ այրը նրա հետ ծածուկ է խօսում։

—Շնորհակալ եմ, Եսթեր, ասաց իշխանը դառնալով դէպի կինը,—ցաւում եմ, որ չը պիտի կարողանամ մնալ. մի անհրաժեշտ գործ ստիպում է ինձ հեռանալ այստեղից։ Բայց խօսք եմ տալիս, երբ միւսանգամ կը գամ կնիքները ստանալու, գիշերը հիւր կը մնամ ձեզ մօտ։

Հարունը առանց սպասելու իշխանի հրամանին, դուրս եկաւ խրճիթից ծառաներին պատուիրելու, որ ձիաները պատրաստեն։ Այդ միջոցին Եսթերը մօտեցաւ իշխանին, և նրա աջը բռնելով իր դողդոջուն ձեռքերի մէջ, կրկին սեղմեց իր վառված շրթունքների վրա, ասելով.

—Ես ձեզ շատ բաներ ունէի խօսելու... խիստ շատ բաներ... Ափսոս, որ չը մնացիք...

Խեղճ կնոջ աչքերում երևացին արտասուքի կաթիլներ։

Դրսից լսելի եղաւ Հարունի հազալու ձայնը, որ նշան էր, թէ ահա գալիս եմ։ Կինը հեռացաւ իշխանի մօտից։

—Լսում ես, Հարուն, ուղիղ մէկ ամսից յետոյ կնիքները պէտք է պատրաստ լինեն, քառասուն հատ։

—Լսում եմ, աղայ, միամիտ կացէք։ Հարունը մի աշխատութիւն երբ յանձն առեց, իր ժամանակին կը կատարէ։

—Մնացէք բարեաւ, Եսթեր։

Այր և կին դուրս եկան հիւրերին ճանապարհ դնելու։ Երբ նրանք փոքր ինչ հեռացան, Հարունը ասաց Եսթերին.

—Ես էգուց առաւօտեան քո հոգին կառնեմ...

—Կանչեմ... կանչեմ աղային... սպառնացաւ կինը բարկանալով։

—Չէ... չէ... մի կանչիր, թէ Աստուած կը սիրես, մի կանչիր...

—Տես, այդպէս կատու կը դառնաս...

(Կը շարունակվի)